



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«17» հուլիսի 2017 թվականի N: 59 ք.Գյումրի

ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2.2-րդ կետի, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Բարսեղ Քոչարյանի 2017 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն և 4 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդները՝ 2017 թվականի հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 24-ը ներառյալ:
2. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:
3. Բարսեղ Քոչարյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Մուշեղ Մուրադյանին:



Իսկականի հետ ճիշտ է

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ